Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4

ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատաւոր»-ի № 4.

Ֆաճ Ֆորէս

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Թարգ. ռուս.
Յ. Տէր-Իսրայէլեանց

Թիֆլիս
Տպարան «Մամուլ»
1917

16-1492

ԱԳՀ
16

Ահ h

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

Ժան-Ժորէսի ճառը*)

Ընկերներ, գոհունակութեան խորունկ զգացմունքով եմ գալիս ձեզ մօտ. Ֆրանսիական պարլամենտի առ-

*) Ժ. Ժորէսը, Ֆրանսիական սոցիալիզմի յառնի պարագլուխը, որ ապանուց պատերազմի սկզբում դաւադիր կերպով, իր այս պատմական ճառը ասէաք է արտասանէր Բերլինում Մարքսիզմի պատճառով Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ յարաբերութիւնների լարման առթիւ Գերմանական կանցլերը արդեսում է նրան գալ Բերլին և խօսել. բայց անմիջապէս այդ ճառը լոյս է տեսնում Ժորէսի «Մարդկութիւն» և գերման սոց.-դեմոկրատների «Ճառաջ» թերթում և աւելի մեծ ազդեցութիւն ունենում միլիոնաւոր մարդկանց սիրտականութիւնը գառնալով։ Մենք տպագրում ենք կրճատուած։

ցիալիստական Ֆրակցիայի կողմից, որպէսզի ձեր առաջ և ձեզ հետ վկայեմ Ֆրանսիական և գերմանական պրոլետարիատի սերտ միութիւնը։ Ես կամենում եմ ապդարարել ի լուր ամենքի նրանց հաւատարապէս ոգևորող անխախտ ցանկութիւնը պահել խաղաղութիւնը. աւելին, թոյլ չտալ այդ խանգարել բանւորութեան կազմակերպման և ազատագրութեան միջոցով։

Ինձ մեծ զոհունակութիւն է պատճառում այն, որ ես կարող եմ հաստատել, որ Ֆրանսիայի ու Գերմանիայի յարաբերութիւնները լաւանում են և Մարոկկոի խնդիրը բարեյաջող լուծումն կստանայ։ Թէ այդ որքան էր ապառնում խաղաղութեանը, թէ որքան մօտ էր վտանգը երկու ժողովուրդներին իրար հետ թշնամացնելու, այդ առայժմ չի կարելի որոշակի ասել։ Դիպլոմատիայի գեղեցիկ յատկութիւններից մէկն էլ այն է, որ չի կարելի

հատատատ իմանալ—չի ապառնում, արդեսք, նա ժողովուրդի համար պատրաստ ստեղծել այն դէպքում, երբ նա իր ազգեցութեամբ խաղաղութիւն պէտք է բերէր։

Կրքերի այս սոսկալի գրգռումը որ բարձրացել է ամենատանեղ խաղաղութեան և անխառն հանգստութեան մէջ, յիշեցնում է ժողովուրդներին և պրոլետարիատին, թէ ինչպիսի խառնուռ և անյուսալի բարիք է խաղաղութիւնը ներկայ հասարակութեան և պետութիւնների մէջ։ Այդ յիշեցնում է ամբողջ Եւրոպայի և ամբողջ աշխարհի բանուոր դասակարգին այն, որ նա պէտք է ձգտէ միջազգային միութեան և պատերազմը չինել զգոյշ և հեռանկատ։ Երբ ասում են «միջազգային պրոլետարիատ»—այդ չպէտք է միայն բարձրագոչ բառեր լինի և դատարկ խօսքեր։ Միջազգային պրոլետարիատը չպէտք է լինի անկանոն

և թույլ ոյժ, որը իւր գործողութիւն-
ները արտայայտում է միայն երբեմն
տեղի ունեցող կոնդրէսներում և մի-
ազգային սոցիալիստական բիւրոյում։
Նա պէտք է դառնայ ազդեցիկ ազ-
բիւր, լաւատեղեակ և արթուն քաղա-
քական ոյժ, որը կարող պէտք է լի-
նի առաջուց միշտ քննութեան ենթար-
կել իրողութիւնները, հետևել ընդհա-
րումների ծագման, որոնց ապագայ
զարգացումը կարող է պատերազմ ա-
ռաջացնել։

Վատահ եղէք, որ իմ այս խօսքերը—
բարձրագոյն սոցիալիստական ֆրազներ
չեն։ Մենք չենք եկել այստեղ փայլուն
եր հռակայութիւններով և յոյսերով իրար
հաճելու։ Մեզ բոլորիս շատ լաւ յայտ-
նի է, որ կապիտալիստական հասարա-
կութիւնը թաքնուած է իւր մէջ թշնա-
մանութեան կործանարար սկզբունաւ-
րութիւնները, ապրատիպի անիշխա-
նութեան և ծայրայեղ հակամարտու-

թեան հետ միասին, որին յաղթահարելու համար պրոլետարիատը դեռևս չպէտք է շատ վստահ լինի, որովհետև դեռ հարկաւոր չափով կազմակերպուած չէ և դեռ խաշոր քաղաքական ազդեցութիւն չունի։ Ազգերի և առանձին անհատների տնտեսական մլցումը և այն անընդհատ ձգտումը ձեռք բերել, ինչ գնով էլ որ լինի նոյնիսկ թնդանօթային ռումբերով, ապրանքներ ապառելու նոր շուկաներ՝—այդ բոլորը ժամանակակից մարդկութեան համար ստեղծում են պատերազմի մշտական հաւանականութեան մթնոլորտ։ Պատերազմը միայն տնտեսների պրոտեկցիոն է այն բոցի, որը արդէն հասնելու է երկրի մակերեսոյթին, այն սեւական, տանջող ջերմացաւին, որը անընդհատ ապատում է մարդկանց հասարակական կեանքը։ Կապիտալիստական արդիւնաբերութիւնը կարիք է զգում օտարերկրեայ շուկաների և իրաւազուրկ

սպառողների, որպէսզի սպառէ իւր երկրում աւելացած ապրանքները։ Այդ բոլորը մեզ վաղուց է յայտնի, որ բանւոր դասակարգը հարկաւոր չափով ոյժ, կազմակերպութիւն և գիտակցութիւն չունի, որպէսզի յետ մղէ այդ թշնամական ոյժերը և դարձնէ նրանց անվնաս։

Բանւոր դասակարգը երբեմն խաբուում է իրեն ազգային մեծութեան ցնորքով. երբեմն նա կաշառւում է, ծիծաղելու չափ աննշան որոշ բաժնով, ստացած կապիտալիստական դաղաղական քաղաքականութիւնից, այդ դէպքերում նա բռնութիւններին միայն աննշան դիմադրութիւն է ցոյց տալիս։ Պատահում են և այնպիսի դէպքեր, որ կառավարող դասակարգերը կարողանում են այն աստիճան մթացնել տնտեսական հակասութիւններից առաջացած քաղաքական ընդհարման իսկական բնոյթը, որ պրոլետարիատը

այլևս անկարող է լինում նրա իսկական շարժառիթները ըմբռնելու։ Բայց նույն իսկ այն ժամանակ, երբ բանաւոր գաղափարը գործում է միանգամայն գիտակցօրէն, բայց դեռ բաւականաչափ ազդեցութիւն չունի քաղաքական կազմակերպութեան մեխանիզմի վերայ, նրա դիմադրութեանը հակադրում են այն անկազմակերպ տարրերը, որոնց առաջ է մղում կապիտալիզմը հարկաւոր ժամանակ։ Պէտք է ասել նաև այն, որ զանազան ազգերի սոցիալիստ բանաւորները իրարից շատ հեռու են ապրում. նրանք շատ քիչ բան գիտեն միմեանցից և հարկաւոր չափով չեն դնահատում միջազգային համերաշխ աշխատանքի ամբողջ օգուտը, որը միայն տանում է դէպի անսխալ նպատակը։ Որովհետև նրանք հաւատացած չեն որ սահմանի այն կողմում կարող են գտնել ընկերներ—դաշնակիցներ, դրա համար էլ նրանք անորոշունջ հպա-

ասկեռում են իրենց ցանալի վիճակին։ Այդպէս է գործերի դրությունը ներ-կայումս։ Բայց ամեն մի փոքրիկ կարելի է ոչնչացնել բանաւոր դասակարգի դիմադրութեամբ։

Ճիշտ է, ցնցող ահեղութեամբ է տարածւում բանաւոր դասակարգի կոչը դէպի այն ժողովուրդները, որոնք ապրում են մշտապէս զէնքերի շառաչիւնի մէջ։ Բայց այդ կոչը դեռ չէ պարունակում այն բոլորը, որը ազդարարում էր Շիլլերեան զանգը։ Մենք լսում ենք արդէն հեռուներ խօսքերը.—«Ես կանչում եմ կենդանիներին և ոգում եմ մեռելներին, բայց դեռ չենք լսում դեղեցկագոյնը—«Ես փչրում եմ կայծակները» *)։ Մենք դեռ պէտք է մինչև վերջը տանենք բանաւոր դասակարգի

---

*) Շիլլերի յայտնի «Զանգակի երգ» այ՝ յայտնի քնարանը հոգել է իբր վերտառութիւն Շաֆիգաուզէնի զանգի վրայ։ Ծն. ռ. թ.

դատարակությունն ու կազմակերպումը։

Բայց այդ բոլորի հետ միասին մենք ունենք յոյս և հնարաւորություն գործելու։ Կորչի կոյր չաւատեությունը, կորչի նաև յուսահատությունը, որ կազմալուծում է կամքը։ Բանւորության և միջազգային պրոլետարիատի կազմակերպման առաջին քայլերը արդէն արուած են։ Արդէն գոյություն ունեն միջազգային ինքնաճանաչության սաղմերը։ Արդէն մենք ուժեղ ցանկությամբ կարող ենք մաքառել պատերազմի կորստաբեր ուրուականի դէմ, որի սերմերը թաքնուում է իր մէջ կապիտալիստական հասարակությունը։ Անգլիական առաջին օրէնքների մասին, որոնք սահմանափակում էին աշխատանքի տևողության ժամանակը, Մարքսը ասել է, որ նրանք բանւոր դասակարգի առաջին դիտակցական հակազդեցությունն են կապի-

տալի կեղեքման դէմ։ Պատերազմը, ինչպէս նաև բանուոր դասակարգի անմիջական շահադործումը — կազմում են կապիտալիզմի արտայայտութիւններից մէկը, և պրոլետարիատի գործունէութիւնը կայանում է նրանում, որպէսզի նպատակայարմար և սիստեմատիկ կերպով մաքառէ պատերազմների դէմ, ինչպէս որ նա արդէն սկսել է գիտակցօրէն, յաջողութեամբ և սիստեմատիկաբար պայքարել բանուորական աշխատանքի շահադործման դէմ։ Ինչպէս չկան «երկաթի օրէնքները» աշխատավարձը անփոփոխ և անխախտ պահելու համար, որ չենթարկէ պրոլետարիատի աղքատութեանը, ինչպէս չկան անձեռնմխելի և կանոնաւորման չենթարկուող բանուորական օրի տեւողութիւն, այնպէս էլ չկայ պատերազմի անձեռնմխելի օրէնք, որը պրոլետարիատը չկարողանայ փոփոխութեան ենթարկել։

Պրոլետարիատը դեռ ևս այնքան ու-

ժեղ չէ, որ ապահովէ խաղաղութիւնը, բայց այնքան էլ թոյլ չէ, որ պատերազմը դարձնէ անխուսափելի անհրաժեշտութիւն։ Երկրի այդպիսի անորոշ դրութեան և անկայուն ոյժերի մէջ, մարդկային ուժեղ կամքը կարող է շատ բան կատարել։ Իրերի իսկական դրութեան այդ անորոշութիւնը սարսափելի է ոչ միայն մեզ, սոցիալիստներիս համար, նա սարսափելի է նաև նրանց համար, որոնք խելակորոյս խիղախութեամբ ժողովուրդներին քաշում են պատերազմի մէջ, որի քաղաքական և սոցիալական հետևանքները ոչ ոք չէ կարող նախօրօք գուշակել։ Հետևապէս հենց այժմեանից մենք պէտք է որոշ ասուիճան ազդենք դէպքերի ընթացքի վրայ, և որովհետև ոչ ոք առաջուց չէ կարող որոշել մեր միջամտութիւնների ապագայ հետևանքները, դրա համար էլ այդ գործի վերայ մենք պէտք է դրծադրենք մեր բոլոր ոյժերը, աշխա-

տեսնք այնպէս, որ մենք հաւատացած լինէինք մեր յաջողութեան վրայ։

Անհրաժեշտ է ցրել բոլոր կասկածները մեր իսկական ճշմարիտ ձգտումների վերաբերեալ։ Մեր օրով, ժամանակակից Եւրոպայում արդարութեան ու ազատութեան գործը ոչ մի կերպ չեն կարող իրականանալ պատերազմի միջոցով։ Երբէք չէ կարելի այդ ճանապարհով որոշել ժողովուրդների փոխադարձ ձգտումների հարցը։ Իհարկէ, Եւրոպայում շատ բռնութիւններ են կատարուել զանազան ժողովուրդների ձեռքով վերջին մէկ ու կէս դարում։ Մինչ այժմ նրանց հատցրած անարժելի վէրքերը մնում են միլիոնաւոր մարդկանց գիտակցութեան մէջ. մինչև հիմա դրանց հետևանքները ծանրանում են ծանր բեռով Եւրոպայի և ամբողջ աշխարհի վերայ։ Միայն դեմոկրատիայի և սոցիալիզմի ուժեղացումը կկարողանայ թեթևացնել այդ բեռը, և

լուծել այդ տանջող հարցերը։ Դեմոկրատիայի զարգացումով մարդկութեան փոխադարձ համաձայնութիւնը հիմքը կկազմի թէ ժողովրդական և թէ միջազգային իրաւունքի։ Ինարկէ սոցիալիզմը ձգտում է կազմակերպել ամբողջ մարդկութիւնը, բայց այդ կազմակերպումը չպէտք է լինի ստիպմամբ։ Ընդունելով իբրև օրէնքի հիմնաքար արդարութիւնն ու հաստատակամ ներդաշնակութիւնը, որոնք արդեւում են շահագործման ամեն մի ձգտում, սոցիալիզմը ստեղծում է բոլոր ժողովուրդների համար ազատ ինքնորոշման իրաւունք ամբողջ մարդկութեան շրջանակում, ինչպէս և ամեն մի անհատի ինքնորոշման ազատութիւնը իւր ժողովրդի մէջ։ Բայց խաղաղութիւնը միայն կարող է ապահովել դեմոկրատիայի և սոցիալիզմի ծաւալումը։ Եւ մենք չենք կարող մեր յոյսը դնել պատերազմի վրայ, դրան, պա-

տանականութեան այդ բարբարոս և կոյր խաղին, այդ ազարտային արիւնոտ մենամարտին, — մեր այն յոյսը, որով մենք ապրում ենք, հլօր պրոլետարիատի ազատագրման, բոլոր ժողովրդների և ազգութիւնների ապագայ օրինաւոր ազատութեան յոյսը, որը բարձր կլինի տէրութիւնները քաջանալու և մանրացնելու բոլոր ձգտումներից։ Եւրոպական պրոլետարիատի վերջնական յաղթութեամբ մեր յոյսերը կիրականանան։

Ահա թէ ինչու մենք, ֆրանսիական սոցիալիստներս հրաժարուել ենք Գերմանիայից դնուած վրէժ լուծելու ամեն մի մտքից, հրաժարուել ենք այսպէս կոչուած ընանչից — փոխ-վրէժից, հրաժարուել ենք միանգամայն և ընդմիշտ, ինչ էլ որ բերելու լինի իրա հետ մշտապէս դաւաճան ժողովրդների բախտը, և մեզ չեն կարող մեղադրել, որ մենք ստորացրել ենք մեր ներքին արդարու-

թեան ձայնը։ Պատերազմը Գերմանիայի դէմ կ'հակասէր դեմոկրատիայի և պրոլետարիատի շահերին. նա ապառնում է ոչնչացնել ժողովրդների իրաւունքները, որոնք կարող են այդ հարկաւոր չափով ապահովել դեմոկրատիայի և պրոլետարիատի միջոցով միայն։ Ներկայումս Եւրոպայի խաղաղութիւնը անհրաժեշտ է մարդկային յառաջադիմութեան համար. իսկ առանց տնտեսական և փոխադարձ վստահության խաղաղութեան Ֆրանսիայի և Գերմանիայի միջև անկարելի է համաեւրոպական խաղաղութիւնը։ Ֆրանսիայի շահերը, որը այնքան շատ բան է արել դեմոկրատական շարժման և բանւոր դասակարգի քաղաքական արթնացման համար, ուրիշ կերպ չեն կարող բաւարարուել, քան այն ճանապարհով, որը դեմոկրատիայի և բանւոր դասակարգի համար հնարաւորութիւն կտեղծի ապագայ զարգացման համար։ Սակայն թէ

ինչու մենք, Ֆրանսիական սոցիալիստներս այստեղ, ձեր առաջ հրաժարելով զինված վրիժառութեան մտքից, մենք գործում էինք ոչ միայն յանուն ամբողջ աշխարհի պրոլետարիատի շահերի, այլ և յանուն երկու ազգերի ամենաէական շահերի. մենք դիմում ենք այստեղ Ֆրանսիային ինչպէս և Գերմանիային, համոզելով նրանց ընդմիշտ հրաժարել նվաճման թշնամութեան ամեն մտքից, բոլոր կասկածներից և գալ փոխադարձ համաձայնութեան, որպէսզի հիմք դրվի ամուր և հաստատուն խաղաղութեան։

* * *

Բոլոր քաղաքական դրութիւններից ամենավտանգաւորը, այդ անորոշ դրութիւնն է։ Մարոկկոի հարցը յանկարծակի այդքան վտանգաւոր դարձաւ հրա համար, որ նրա մէջ, ինչպէս խճճված կծիկի մէջ մխացան մի քանի ընդհարումներ։ Անգլիայի և Գերմանի-

այի մէջ եղած ընտանեական հակամարտութեանը աննկատելի կերպով միացաւ վիճաբանական անլատահութիւնը Գերմանիայի և Ֆրանսիայի միջև։ Այդ խճճուած դրութեան պարզաբանումը առաջին քայլն է, որպէսզի խաղաղ կերպով մէջ տեղից վերացուի առաջիկայ դժուարութիւնները։ Եթէ քննենք ամեն ընդհարում առանձին-առանձին և հաշուենք մէկ-մէկ, այն ժամանակ բաւականաչափ հեշտ կլինի վերացնել ամեն մի թիւրիմացութիւն։ Եթէ Ֆրանսիան յայտարարի, որ նա միշտ էլ առհաւատակ աշխատում է խաղաղութիւն պահպանել, որ նա երբէք չէ ցանկացել զարգացնել Անգլիայի և Գերմանիայի միջի թշնամութիւնը։ Եթէ Ֆրանսիան ցանկանայ հաստատուն պահպանել իւր համաձայնութիւնը և չդառնայ դաւադիր դաշնակից, որի նպատակն է բռնանալ՝ այն ժամանակ նա կատարած կլինի այն ամենը,

ինչ որ անհրաժեշտ է և նրա ուժերից կախված, պարպելու երկրի ներկայիս խճճված և երկդիմի դրությունը, որ պատերազմի վտանգով է սպառնում։ Միջազգային պրոլետարիատը, որը պէտք է իր վրայ վերցնի մարդկության նախաձեռնելու և աթափեցնելու վեհ գործը, պէտք է գործ դնէ իւր ուժի ամբողջ թափը, որպէսզի ապահովէ խաղաղության պահպանումը. ամեն մի ընդհարում Գերմանիայի, Անգլիայի և Ֆրանսիայի կամ դրանցից որևէ երկուսի միջև կլինի դժբախտություն ամբողջ մարդկության համար։ Այդ երեք պետությունները հաւասարապէս անհրաժեշտ դործօններ են կուլտուրայի համար։ Այդ երեք ժողովուրդների միջև արիւնոտ ընդհարումը սպառնում է խորտակել մեր քաղաքական և պարլամենտական, մեր քաղաքացիական և կրօնական աղատությունը, մեր փիլիսոփայությունը և դի-

ութիւնը, մեր սոցիալիստական ուսմունքը, մի խօսքով այն բոլոր արժէքները, որ մենք արդէն ձեռք ենք բերել կամ յոյս ունենք ձեռք բերելու ապագայում։

Դժուար է նախատեսել, թէ որքան կուլտուրական բարիքներ կոչնչանան, եթէ այդ ժողովուրդներից մէկն ու մէկը ոչնչանայ կամ թուլանայ։ Այդ ժողովուրդները, անկասկած, կարող են օգտագործել իրենց հանճարեղ ընդունակութիւնները աւելի բարձր նպատակների համար՝ քան ատելութեան ու կործանման այն մութ ուժերին որոնց նրանք կթողնեն գերիշխելու աշխարհում։ Եթէ Գերմանիայի և Անգլիայի միջև թնդանօթների օգնութեամբ համաշխարհային շուկաներ ձեռք բերելու համար պատերազմ ծագէր՝ դա կստիպէր մարդկութեանը նորից վերապրել Նապոլէոնի ժամանակի սարսռազդու տանջանքներն ու զրկերգութիւնը։ Ո՞վ

կհամարձակուի մի այդպիսի զժբախտութիւն բերել ամբողջ աշխարհքի գլխին։ Կարելի է, արդեօք, երևակայել, որ այդ չարադուշակ երազը իրականանայ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0836117

Կ

ԱԳՀ
16

Գինն է 10 կոպ.

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատաւոր»-ի
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
№ 3
Վ. ԽՈՐԷՆԻ

ԻՆՉ Է ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«Աշխատաւոր»-ի գրադարանի գրքոյկները

1. Ե. Բրեշկո-Բրեշկովսկայա. — Ինչ պէտք է անել Հիմնադիր ժողովում. . . . 5 կոպ.
2. Ե.Ա. Բուբակին. — Հողի սեփականութիւնը և համայնական սեփականութիւնը. 10 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, редакція «Ашхатаворъ», Могнинская ул.